Զայնիվ մաղթեմ արտասվալի
Օգնեա, հանճար Մեծ Թագուհի
Ղամպար ես Դու լուսովդ միշտ
Հայցեա վասն իմ, ով Սրբուհի:
Տեր, ողորմեա...

Խնդրեմ ի Քեն, Կույս Տալիթա,
Միշտ անդադար բարեխոսեա
Ծնար զԱստված որպես տղայ,
Հիսուս Փրկիչ Տեր և Արքա:
Տեր, ողորմեա...

Դու ես Աղբյուր ծարավելոց
Եվ փարատիչ ամեն ցավոց
Միջնորդութեամբ առաքելոց
Ողորմեացես ազգիս Հայոց:
Տեր, ողորմեա...

Աղաչանոք սուրբ Հրեշտակաց
Եվ աղոթիվք Վերին Զորաց,
Լուր Տեր ձայնի մեղավորաց
Փրկեա ազգիս ի փորձանաց:
Տեր ողորմեա...

Ժամանակին Նինվեացվոց
Արագ լուար ձայնի տղայոց,
Մի՛ բարկանար մեղաց մերոց,
Զի ստեղծված եմք ի ձեռաց Քոց:
Տեր, ողորմեա...

Ով Սերովբեք և Քերովբեք,
Մեղավորաց ձայն լսեցեք,
ԶԱստված զմեզ հաշտեցուցեք
Անչեջ հրոյն ազատեցեք:
Տեր, ողորմեա...

Ողորմութիւն մեզ պարգեւեա,
Զհիվանդ հոգիս մեր բժշկեա,
Ի բանսարկուէն զմեզ փրկեա
Եվ ի չարեաց անփորձ պահեա:
Տեր, ողորմեա...

Խնդրեմ ի Քեն Հայր պատվական,
Լուսավորի՛չ ազգի մարդկան,
Տեր, սուրբ Գրիգոր՝ պետ պարթեւյան,
Լեր մեզ պարիսպ և պահապան:
Տեր, ողորմեա...

Ծնողաբար ի մեզ գթա
Ցրվեալ որդվոց Քո ժողովեա
Ուրախութիւն մեզ պարգեւեա
Եվ ի բարին առաջնորդեա:
Տեր, ողորմեա...

Սրբուհի Մայր ողորմութեան,
Քեզ աղաչեմք մենք միաբան
Բարեխոսեա առ Տեր Արքան,
Վասն աշխարհիս խաղաղութեան:
Տեր, ողորմեա...

Ժամեա զմեզ ի օգնութիւն,
Զի մի՛ մտցուք ի փորձութիւն,
Մաքուր մարմնով լինել ի քուն
Արդար հոգով մնալ արթուն:
Տեր, ողորմեա, Տեր, ողորմեա,
Տեր, ողորմեա, Տեր, ողորմեա,
Հիսուս Փրկիչ, մեզ ողորմեա:

Ճանաչել ալեմաստուրյուն
է՝ ալեքսաք
Իմանալ ալքանս Հանճարոյ

ՈՂՈՐՄԵԱ

ԱՂՈԹՔ
ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱ

Տեր, ողորմեա, Տեր ողորմեա,
Տեր, ողորմեա, Տեր ողորմեա,
Ամենասուրբ Երրորդություն,
Տուր աշխարհիս խաղաղություն
Եվ հիվանդաց բժշկություն,
Ազգին Հայոց այցելություն:
Տեր, ողորմեա...

Արի՛ Աստված, հարցն մերոց,
Որ ապավեն ես նեղեցելոց,
Հաս օգնություն ծառայից Քոց
Լեր օգնական ազգիս Հայոց:
Տեր, ողորմեա...

Ամենասուրբ Երրորդություն,
Ի Քեն հայցեմք մեզ օգնություն,
Ննջեցելոց արքայություն
Ազգիս Հայոց սեր, միություն:
Տեր, ողորմեա...

Միջնորդությամբ սուրբ և անմահ
Եղեմական պատարագին
Հիշյալ զհեղումն Արյան Փրկչին
Եվ խնդիր փոքր հոտին:
Տեր, ողորմեա...

Թագավորդ թագավորաց,
Դու ես քավիչ մեղավորաց,
Փրկեա ազգս ի փորձանաց
Եվ ի ձեռաց անիրավաց:
Տեր, ողորմեա...

Արդ անկանիմք առաջի Քո
Գոչեմք մեղա Տեառն մերո
Դարձո ի մենջ զցասում Քո,
Վասն անսպառ գթության Քո,
Տեր, ողորմեա...

Խնդրեմք ի Քեն արտասվելով
Եվ պաղատիսք զայս ասելով.
Զմեղս մեր մի հիշեսցեր, Տեր,
Այլ գթությամբ Քով քավեսցես
Տեր, ողորմեա...

Հորն լուսո միշտ մաղթեցեք
Որդին ընդ Հոր աղաչեցեք,
Հոգվոյն շնորհոք մեզ օգնեցեք,
Ի բանսարկուեն մեզ սթափեցրեք
Տեր, ողորմեա...

Հիսուս Քրիստոս, Կարող Աստված,
Քեզ կաղաչեմ բազկատարած,
Դու, Տեր, մաքրեա զմեզ ի մեղաց
Եվ ազատեա ի փորձանաց:
Տեր, ողորմեա...

Արի՛, արի՛, Հովիվ Բարի,
Առ ի խնդիր Քո ոչխարի
Մեղավոր եմ մեղաց գերի,
Խնաեա որդվոյ անառակի:
Տեր, ողորմեա...

Սուրբ պատարագ Հացն կենաց,
Ողորմության Քո Դուռն բաց.
Խոստովանիմք Քրիստոս Աստված,
Փրկեա զաշխարհ ի փորձանաց:
Տեր ողորմեա...

Միջնորդությամբ Սուրբոյ Խաչին
Եվ անարատ Սուրբ Ծնողին
Թեթևացո մեզ ի մարմին
Ի ծանրութեան մեղաց բեռին:
Տեր, ողորմեա...

Քո անպատում խոնարհությամբ
Եվ կամավոր խաչելությամբ,
Հաշտեա ընդ մեզ, Տեր գթությամբ
Եվ թող զմեղս ողորմությամբ:
Տեր, ողորմեա...

Գովյալ ես Դու, Փայտ փրկության,
Ամեն օրհնեալ, հաղթող Նշան
Ի գիշերիս ստվերական
Ծագեա մեզ զլույսդ արփիական:
Տեր ողորմեա...

Աստվածածին ամենօրհնյալ,
Զպաղատանս մեր ընկեալ,
Ի նեղության ժամուս հասեալ,
Առ Քեզ գոչեմք անձամբ թախծեալ:
Տեր, ողորմեա...

Բանին կենաց բարձող եղեր,
ԶԱստված մարմնով փառակրեցեր,
Առ Տեր Արքայն բարեխոս լեր,
Ի փորձանաց զմեզ փրկեցեր:
Տեր, ողորմեա...

Աստվածածին, զՔեզ ունիմ հույս,
Բարեխոսեա մոլորելույս
Եվ ողորմեա, Տեր իմ Հիսուս,
Հոգով-մարմնով կորուսելույս
Տեր, ողորմեա...